




Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



ՀԱՆՐԱԳԻՏ

ՏԱՍՆՈՐԵԱՅ

هانراكيداق

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 35

30 ՆՈՅԵՄԲԵՐ 1902

ԱՆՏԱՌ

Անտա խալ՝ լանիս, մեմարան վեհ՝ սիրուն,
 Քանի՜ քաղցր է ման գալ ընդ ստուերոյ թափուն,
 Եւ ի խոսքս մըին, երազել մոլորեալ,
 Եւ ազատ հոգերէ հանդիմներ բիր զգալ.
 Հիացունս սրիս. հոն՝ ընչեմ բուրումներ
 Ծառերու՝ դալարեաց սրմուքեան քաղցրաբեր,
 Կը լսեմ եւ ջրոց կարկաչունն հեռագին
 Որ կարծես կը կոչէ զիս ի խոր պուրակին.
 Ռհ, քանի՜ երջանիկ, թէ կեանքն իմ սահէր,
 Հոն՝ հեռի մարդոցմէ... առուակաց առ ընթեր՝
 Վեր գորգի ծաղկաւէ, ի վայրի մեծակեաց,
 Անտուկ նիւհէի ստուերին սակ կնձնեաց.
 Ամէն ինչ կենդանի յայս խաղաղ կամարին,
 Այս ծաղիկն դեղնագոյն, զարդ խնայան անտառին,
 Մեղմ հովէ հողմավար, այս սերեմ գաղփաղփուն
 Կը ճօնեն փոխ առ փոխ խրեանց զլուսն շարժուն:

Անտա օ՛ն, շարժէ՛ դու, օղին մէջ կենսախայս,
 Տարփածուաց ո՛րն իրօք, պիւրահար է քեզ շայս.

Ամէն ոք քեզ համար, կը սաժէ՛ օտար սէր,

Այլ ինձ լոկ է հեռին, մեծութեանդ հանդիմներ:

Թարգմ. Յ. Ս. Գ.

Դատր-Բէօյ

ՀԱՅԹՈՊՐԻԱՆ

ԿԻՐԱԿԻԻ ՄՏԱՄՈՒՄՆԵՐ

Կ Ր Օ Ն Ք Ը

Իրողութիւն մը որ չէ հերքուած, ստէպ կը դելադրէ մեզ, իբրեւ ներհուն փաստ մը, բացորոշ յանկերգ մը, կրկնել թէ « Կրօնքն է հիմը մարդուն բարոյականին » : Շատեր կրկնեցին այս յանկերգը. քանի քանիներ արդէն գրչի զօրաւոր գողտուովն տակ շարունակաբար կը միտին դեռ եւս հրահրել բարոյականի լայն ու անեզր հորիզոնին վրայ և կը մտածեմ թէ, պարտքը, իրաւունքին առնթեր, պիտի կրնայ միմիայն ռահվիրայ մը ըլլալ Անոր, զոր պէտք էր որ ըլլար և զոր պիտի յարատեւէ բնականօրէն :

Մտէ՛ք տղուն բնական զարգացումէն ներս, փնտռեցէք անոր սրտին ու մտքին փթթումին մէջ ընդ միշտ խաւարին ու գեղեցիկին երանգները եւ պիտի ապահովցնեմ անկասկած թէ, անոր այդ էն կարեւոր շինուածքին մէջ բացայայտօրէն պիտի տեսնէք այն ունակութիւնը որ ենթական՝ ճշմարիտ անհատ մը ընելու սահմանուած է, կը հաւատա՞ք բնազդումին. զն ուրեմն հաւատացէ՛ք նաեւ թէ, անոր այդ փթթումին մէջ դժուար պիտի չըլլայ, առջի օրէն իսկ դրօշմել կրօնի մաքուր ու շինիչ հիմը, եւ ապահով եղէք թէ պիտի մեծնայ ան. որ մը, կատարելապէս նախանձախնդիր եղած կրօնի եւ, արդէն քաղաքակիրթ մարդկութեան ալ պահանջած առողջ մէկ անդամը : Յաւ է ըսել թէ կրօնի ճանաչողութիւնը շատ յետի է : Ըսի թէ փափաքուած այդ առժանի անդամը, փթթեցնող տարր մը ըլլալէ չը պիտի դադրի երբեք, այդ « Մարդկային Ընկերութիւն » ըսուած համայնքին հիւսկէնէն, — անկասկած պիտի ըսեմ :

Արգահատողի մը իսկութեանս մէջ է որ կուգամ մատնանշել մեր ներկայ վարժարաններէն ներս կրօնի ուսուցման չգոյութիւնը : Գուցէ առարկուի թէ Հայ վարժարաններու մէջ առաջնութիւնը տրուած է^(*) կրօնագիտական դասաւանդութեանց, բայց ես անոր համար է որ նախատեսելով անոնց կրակուրոց^(*) առարկութիւններն, ես խուսափող կեղծիքէն, առանց բացառութեան պիտի խոստովանիմ թէ, մեր վարժարաններն ամէն կերպ պահանջմանց լիո-

վին պատասխանող կը սեպուի թէ եւ, օրուան Պատ. Ուսմ. Խորհրդոյ գծած ուսմանց յայտագրին. բայց իմ կէտ նպատակս նուազ արդարացնող սա իրողութիւնն է. ինչ որ « Կրօնի ուսուցման անրաւականութիւնը » մատնանշել էր :

Կը խոստովանիմ անկեղծութեամբ թէ շատ յետամնաց եղած ու շատ տխուր իրողութեան մը մէջ է որ կը ներկայանայ մեզ, բոլորովին անգոհացուցիչ տափակութեան մը տակ :

Կրօնքի մը հիմն է որ կայուն դիրքի մը մէջ պիտի դնէ մեր սերունդը, որքան ալ զարգարուած ըլլան անոնք օտար զարկերով և խառտիք էն առաջ, անոնց թոթովոյ լեզուին տակ « Հայր մեր » ին հետ կըրօնքի ուսնացող սերմը գնել, կրօնքի անխախտ հիմը կանգնելով անոնց մատղաշ սրտին մէջ :

Ձը վարանինք եւրէք անոնց դեռափթիթ հասակէն սկսելով ազդու ընել տալ կրօնի մեծութիւնը, անհրաժեշտ պէտքը, տակաւ առ տակաւ ճանչցնել տալով հաւատքի մեծութիւնը, յարգանքը առ Եկեղեցին եւ մարդկային ընկերութիւն :

Եւ կը խորհիմ թէ առանց կրօնի մեծցող մը, այսօր, պատառաստուն զգեստներու հետ ամենագեղեցիկ գլխարկ մը դնողի մը պիտի նմանէր :

Ես կրօնամոլ մը չեմ. եւ ոչ իսկ կրօնաւոր մը. բայց պիտի փափաքիմ որ պատկառելի կրօնական ժողովոյ Ս. Հայրերը այս էական կէտին իբր աններող նախանձախնդիրներ, չյապաւցենէին իրենց կողմէ չըրջուն կղերական քննիչ մը կարգելու, գոնէ ամսական պտոյտով մը աչքէ անցնելու համար աւանդուած այդ ճիւղը, վարժարաններէ ներս, բան մը որ գովեստով կ'ըսենք, իր արդար նախաձեռնութիւնը ունեցած է Ուսմ. Խորհրդոյ դիւանը, իր իսկ նշանակած անդամակիցներու ձեռքով : « Բիչ բացակայութիւնը սէրը կը սաստկացնէ, իսկ երկարատեւ բացակայութիւնը սէրը կ'ըսպաննէ » ըսած է ծանօթ գիտուն մը : Ուրեմն հաճելի ընէ իր կրկնակ ներկայութեամբ՝ կրօնը՝ մեր սերունդին եւ անոնք անքակտելիօրէն կապէ Անոր հետ, արգասաւորելով նորափթիթ սրտերն, ընդմիշտ կրօնի օգտակարութեամբը :

Գատը-գիւղ

ՌՕՄԱՆ Տ. Ի.



ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ի բոլոր սրտէ պատուէ ծերունի հայրդ, եւ մօրդ գորովայն խնամքները մի՛ մոռնար. անոնց բոլոր քեզի ըրածներուն ե՞րբ պիտի կարենաս փոխարէնն հատուցանել:

Հօրը օրհնութիւնը զաւակներուն տունը կը հաստատէ, եւ մօրն անէծքը հիմնայաւակ կը կործանէ զայն:

Ծնողացդ ի՞նչ որ ըրիր դուն՝ զայն միայն կրնաս յուսալ քու զաւակներէդ ծերութեանդ ժամանակ:


Զաւակաց իրենց ծնողաց վրայ ունենալու սէրն ա՛յնպիսի բնական ու անհրաժեշտ պարտք մըն է, որ Աստուած իր տառնաբանեայ պատուիրանքներուն հինգերորդն ըլլալ զանի եւ ըսաւ. «պատուէ՛ քու հայրդ ու մայրդ»: Երբ տղայք մտածեն որ առանց իրենց ծնողաց ո՛չ աշխարհք կուգային եւ ո՛չ

այն հասակի, տարիքի, վիճակի, պաշտօնի, պատիւներու կը հասնէին, զանոնք սիրելու, մեծարելու եւ խնամելու ի՞նչ սէր ու յորդոր չեն զգար իրենց սրտին մէջ: Ի՞նչ անպատմելի ուրախութիւն չեն իմանար նաեւ անոնց օգնած, անոնց հանգստութեանն ու երջանկութեանը պատճառ եղած ժամանակներն: Ու այն բարիքներուն փոխարէն ի՞նչ օրհնէնքներ չեն ընդունիր իրենց երախտագէտ ծնողքէն եւ. որպիսի՞ զովասանք չեն լսեր բոլոր տեսնող ու իմացող անձերէն. ո՛ւր թողունք Ամենակարողին օրհնութեան զեղմունքն, որով ամէն ձեռնարկած գործերնին իրենց ծնողախնամ ձեռքին մէջ մէկ մէկ յաջողութիւն, եւ մէկ մէկ փառք ու պարծանք կը դառնան:

Ազնիւ զաւակ մը՝ ո՛չ երբեք իր ծնողաց աղքատութեանը կամ խոնարհ վիճակէ ըլ-

լուն վրայ պէտք է ամչնայ: Հարիւրաւոր օրինակներ կան ծնողասէր զաւակներու, բայց հետեւեալը շատ գեղեցիկ օրինակ մ'է:

Տիւրա անունով երեւելի սպան, աղքատ գիւղացիի մը զաւակ էր, սակայն իր պատկանած գունդին մէջ կը կարծէին թէ՝ երեւելի Տիւֆօր տը Տիւրա ազնուականին ցեղէն էր: Օր մը յանկարծ հայրը զինքը տեսնելու կուգայ. ծնողասէր Տիւրա մեծ ուրախութեամբ զինքը կ'ընդունի. եւ այնպէս գիւղացիի հագուստովն ու ոտքի տըրեխներովը կ'առնու իր գնդապետին կը ներկայացնէ: Լռւողովկոս ժ. Գ. Բ. թագաւորը կ'իմանայ, Տիւրային այնպիսի սիրով հայրը ճանչնալն, ընդունիլն ու պատուելը. արքունիք կանչել կուտայ զինքը, եւ ձեռքը բռնելով անոր կ'ըսէ. «Տիւրա՛, ուրախ եմ որ զօրքերու պատուականագոյն սպաներէն մէկը ճանչնալու պատեհութիւնը կ'ունենամ. թոյակ կապեցի քեզի, ամուսնացի՛ր, զաւակներդ ես կը հոգամ. արժանի՛ ես զաւակ ունենալու, որպէս զի քեզի նմանն»:



ՏԻՊՈՐ ԸՆՏԱՆԻՐԸ

Պատուհանիս խիստ մօտիկ,
Թռչուն մ'աղուոր, խատուտիկ,
Եկեր է բոյնը շիներ,
Մամուռներով զայն պատեր:

Ու բացալիկով իր Թեւեր,
Կը Խռչի ան օդն ի վեր,
Յանցնելով երգեր սիրուն,
Ենթին մէջ ան անհուն:

Ու պըզտիկ իր ծագուկներ,
Ճըլվըլուն կտուցն բացեր,
Կը սպասեն մօրն որ կուգայ,
Հեռաւոր ծախրով մը հըսկայ:

Կեր բերէ մայրն այն, բարին
— Մայրերուն մէջն ալ արիւն —
Ջազուկներուն, ճիծերուն,
Որ կը պողան միշտ արեւուն:

* * *

Ու կը նայիմ ընտանիքին,
Թըռչուններուն այդ պըտուտիկ,
Որոնք մեծէն մինչեւ փոքրիկ,
Հայր, մայր, եղբայր, սիրով կ'ապրին:

Պ. Բ. Բ.



ԸՆՁՈՒՂՏԸ

Այս կենդանիին վրայ ստացած առաջին տեղեկութիւնն էր Վայեանի կը պարտինք

Ընծուղտին բարձրութիւնը սովորաբար հինգ ու կէս մէթր է՝ արունքերուն համար, իսկ էգերը ասկէ մէկ մէթրի չափ պակաս բարձր կ'ըլլան: Ծառերու տերեւներով կը սնանին եւ վիսօզաի տերեւները շատ կը սիրեն: Քնանալու համար ծունդի կուգան, նոյնպէս այս դիրքին մէջ է որ մարգագետիններու խոտը կ'որոճան: Բնութեամբ հանդարտ ու երկչոտ անասուններ են. վըտանդի մը առջեւ իրենց առաջին շարժումն է խոյս տալ: Տարօրինակ գնացք մ'ունին. վզերին երկնցուցած, գլուխին ետ ու առաջ տատանելով՝ կարծես թէ կը կազան, պաշտպանողական միջոց դրեթէ՝ բնաւ չունին, որովհետեւ մարմիննուն բոլոր մասերն տկար են. ինքզինքնին ապատելու միակ միջոցին՝ սրունքներին է, եւ այնքան ալ արագ կը վազեն որ առիւծն իսկ ետեւնուն չկրնար հասնիլ:


«Միւսգաի մը քով ընծուղտ մը տեսայ, կը պատմէ Լը Վայեան, անմիջապէս ձի հեծայ եւ ընկերներուս ձայն տուի որ օրինակիս հետեւին, եւ խմբովին սկսանք կենդանիին ետեւէն հալածել: Հագին քանի մը մէդր տեղ գացած էինք, տեսանք որ ընծուղտը շատ հեռուները գացեր էր: Ետեւէն սկսանք արշաւել եւ ժամանակ ժամանակ հրացաննիս կը պարպէինք, կարծելով թէ անոր թնդիւններով պիտի կըրնանք սարսափեցնել ու կասեցնել կենդանին: Բայց, անդգալապէս, այնքան հեռացաւ մենէ որ երեք ժամ անընդհատ վազելէ ետք մեր ձիերը չնշասպառեղած՝ ստիպուեցանք կանգ առնել, աւելի յառաջ երթալ անկարելի ըլլալով»:

Ափրիկէի Նուպիոյ անապատներուն մէջ, ուր ընծուղտները ամէնէն աւելի շատ են, սա պէս կ'որսան ասոնք: Հինգ վեց որսորդներ՝ արագընթաց ձիերու վրայ հեծած կը խորասուզին անտառին մէջ՝ ուղտերու հետ՝ որոնց վրայ բեռնաւորած են ջուրի եւ ուտեստի անհրաժեշտ պաշարներ: Երբ ընծուղտը նշմարեն, կը ցրուին, ձիչեր կ'արձակեն զայն սարսափեցնելու համար, եւ առանկով կ'առանձնացնեն անտառին ամէնէն

խիտ տեղը : Խեղճ անասունը չգիտեր թէ ապաստանիլ կարճած տեղը թակարդ մըն է : Յաժ ծառերուն խիտ ոստերն ու ճիւղերը կը կառչին իր եղջիւրներուն և արագութիւնը կը կամացցնեն : Որսորդները կը հասնին ետեւէն, և երկայն չուան մը անցընելով վիզէն ողջ ողջ կը բռնեն : Կենդանին եթէ շատ դիմադրութիւն ընէ՝ այն ատեն միայն կ'սպաննեն՝ քէթ մորթը կարենալ առնելու համար :

տին կռնակին վրայ կը յարձակի և իր հզօր ճիրաններով նախ անոր ուսերը կը ջննայ պատառել :

Վայրենի մը հարաւային Ափրիկէի մէջ երկար արչաւանքներ ընելէ յետոյ աղբիւրի մը մօտիկը կը հանգչէր, երբ կը տեսնէ մացառի մը մէջ ընձուղս մը որ միմօզաի տերեւներ կը քաղէ հանդարտիկ . իրմէ քանի մը քայլ հեռու, առիւծ մը կը նստորաստուի անոր վրայ յարձակիլ : Առիւծը բոլոր ոյժը



Ընձուղսը ուրիշ թշնամի մըն ալ ունի, ահարկու թշնամի մը՝ որ առիւծն է : Եթէ ընձուղսն ճարպիկ է և զօրաւոր կազմուածք մ'ունի, այն ատեն կենդանիներու թագաւորին ձեռքէն կրնայ ճողոպրիլ : Ծամբորդ մը կը պատմէ թէ իր աչքերովը տեսած է երկու ընձուղսներ, որոնց ուտերը կը կրէին տակաւին նպինները այն վէրքերուն զորս առած էին առիւծին հետ կռուած ատեննին : Արդարեւ, առիւծը ամէնէն առաջ ընձուղ-

ժողուեց եւ մէկ ոստումով կենդանիին գըլխուն վրայ նետուեցաւ, այս վերջինը կողմնակի շարժում մ'ընելով՝ յարձակողը գետին տապալեցաւ փշալից մացառներուն մէջտեղ : Անմիջապէս ընձուղսը կ'սկսի արշաւել ապագարար... : Ժամանակէ մը վերջ, արծիւներու երամներ կը նշմարուին նոյն միմօզաի ոստերուն վրայ : Որսորդներ խուզարկութիւններ կ'ընեն եւ փուշերուն մէջէն հսկայ առիւծի մը դիակը կը գտնեն :

ԱՇՈՒՆԻ ԵՐԳԵՐ

ՊԵՂՆԱՄ ՏԵՐԵՐՆԵՐ

Հասաւ աշունն ալ ցրտին
Դաշտերն ըրաւ ամայի՛.
Բնութեան երգերն կը ցնդին,
Խուլ ձայն մը միայն կը լսուի:
Ցնցուի աշխարհը՝ աշնան,
Դողան սիրտերն՝ հէք, անոք,
Խոր հծծիւններ բարձրանան,
Հոգիներէ՛ իբր բողբոջ:

* *

Սարսուռներով ցնցուած
Խեղճ տերեւներ դալկահար,
Դիմէք անդունդն մոխրամած,
Ու հոն սգաք տենդահար:
Խեղճ, չորացած տերեւներ,
Կեանքի պատկեր դուք համակ,
Միշտ սլացէ՛ք փանփեհեր,
Այս է կեանքին լոկ հմայք:
Գացէ՛ք, գացէ՛ք դուք դամբան,
Հոն է եւ մեր վերջին տուն:
Անոր առջեւ վերջանան՝
Խօ՛ւ հաճոյքները մարդուն:

ԱՇՈՏ ՊԱՁՊԱՁՆԱՆ



ՓՈՔՐ ԼՐԱԳՐԱՎԱՋԱՌՆԵՐՆ

Ն Ի Ի - Ե Ո Ր Ք Ի Մ Է Ջ

«Գնեցէք Սեճը, Ուօրլսը, Թեյեկրամը,
Մեյլը, Բօսդը», կ'աղաղակեն գրգռեալ գետաց
տղաքներ յստակ ու ռեգային ձայներով:
Նիւ-Եորք հասնող ամէն ուղեւոր վարժուե-
լու է այս անողորմ յանկերգին որուն սուր
ու աններդաշնակ խազերը անդադար կը
հնչեն իր ականջներուն, իր օթէլին դուռը,
իր կառքին բազրոտնին վրայ. մայթին ու
խճուղիին վրայ, ամէն տեղ պիտի հետապն-
դուի փոքր լրագրավաճառներու լէգէոն-
ներէ:

Թրամուէյ մը անցա՞ւ, այս պզտիկ լը-
րագրաճառներէն մէկը կառքին վրայ կը
մաղցի, եւ հակառակ կառավարին արգելք-
ներուն որուն ընդհանրապէս կ'ընկերանայ

կռուփի հարուած մը որ իր նպատակին չի
հասնիր, ասեղի մը ճարպիկութեամբ կը
սպրդի նստարաններուն մէջ ուր նստած են
ուղեւորները:

Եթէ լուրերը չահեկան են, օրուան թեր-
թերը զարմանալի արագութեամբ կը ծախ-
ուին. եւ փոքր լրագրավաճառը որ երբեմն
եօթը տարին իսկ լմնցուցած չրլլար, աղ-
տոտ մատներուն ծայրովը գրպանը կը նե-
տէ դրամը եւ մանրուքը ետ կու տայ փորձ
արկղակալի մը անվրէպ ճարպիկութեամբ:
Կը հետաքրքրուիս այդ անմեղութեան, ման-
կային միամտութեան, նուրբ վարպետու-
թեան խառնուրդին. կը փորձուիս հարցա-
փորձել այդ կանխահաւ վաճառականը՝ իր
գործէն ըրած չահերուն վրայ, բայց արդէն
անյայտ եղած է: Ուրիշ կառք մը կ'անցնէր
դիմացէն, որուն վրայ ցատքած է վարպետ
լարախաղացի՝ մը պատիւ բերող դիւրա-
շարժութեամբ:

Ամերիկայի մէջ երկու ասպարէզներ կան
բացուած տղաքներուն համար: Հստ կամ
կրնան լրագիր ծախել կամ կօշիկ փայլեցը-
նել: Եւրոպայի մէջ այս արհեստներուն ա-
ռաջինը հասարակ մարդոց ձեռքն անցած է,
իսկ երկրորդը գրեթէ բոլորովին անհետա-
ցած է. հասարակաց ճամբուն վրայ անոր
յիշատակը միայն կայ: Ընդհակառակն օրէ
օր կը ծաղկի Ամերիկայի մէջ ուր երկսեռ
սպասաւորները ուրիշին կօշիկները փայլե-
ցնելու տաղանդը կը նկատեն իրեւ աճէ-
նէն ստորնացուցիչ մէկ արտայայտութիւնը
մարդկային ստրկութեան: Ինքզինքին յար-
գը գիտցող մարդու մը կամ կնոջ մը անար-
ժան այս տարհապարակը վերապահուած է
փոքր թափառիկներուն:

Փոքր լրագրավաճառներն իսկ արհա-
մարհոտ կարեկցութիւն մը չեն կրնար զըս-
պել հանդէպ իրենց հին ընկերներուն ուրք՝
ա՛լ կարողութենէ ինկած՝ օտիպուած են
հրաժարիլ օրաթերթերու վաճառումէն եւ
տուփ մը առնելով առտուրնէ մինչեւ իրի-
կուն խողանակ եւ վրձին կը շարժեն:

* *

Ուսկի՞ց կու գան այս խեղճ տղաքը որ
այդքան կանուխէն ստիպուած են իրենց
ապրուստը ճարել: Ընդհանրապէս իրենք
ալ չեն գիտեր: Ումանք բնակարան մը ու-

նին եւ ամէն իրկուն իրենց ծնողքին կը տանին օրուան չահը, բայց ասիկա բացառութիւն մըն է: Մեծագոյն մասը շատ պիտի տագնապէին իրենց ընտանիքին անունն ըսելու համար. եթէ գիտնան իսկ, քիչ ատենէն մոռնալու ստիպուած են: Ինչ շատ նկարագեղ մականուններով կը ճանչնան զիրար: Սա, որուն վտիտ մարմինը կը կորուսի վեց ոտք հասակով մարդու մը ձգած գրգռեալին մէջ, կը կոչուի «քուրջի ծրար»: Սիւսը, որ կը համարձակի յաճախ դուրս ելլել իր թաղէն ու կ'երթայ իր արհեստակիցնորուն թաղը լրագիր ծախել, «գող» կը յորջորջուի եւ այլ եւս ուրիշ անուն չունենար:

Երբ լրագրին գործերը ծաղկեալ վիճակ մը ունին, փոքր լրագրածախները կրնան բաւական սննդաբար կերպով կերակրուիլ, ամէն իրիկուն գէշ աղէկ երթալ պառկիլ պանդոկ մը, եւ նոյն իսկ մանր մունր զուարճութիւններ վայելել:

Անկիօ Սաքսոններուն եւ Ֆրանսացիներուն միջեւ խառնուածքի և բնաւորութեան մեծ տարբերութեանց հակառակ, Նիւ-Եորքի փոքր լրագրավաճառները մէկէ աւելի նմանութիւններ ունին իրենց փարիզի արհեստակիցներուն հետ: Անոնց պէս իրենք ալ կը սիրեն այցելել այն տաղաւարներն ուր հինգ ոտքով կատուներ ցոյց դրուած են, և երբ հարիւր փարա ունենան ծախսելու, աժան թատրոններ կ'երթան ուր մոլութիւնը կը պատժուի եւ առաքինութիւնը կը վարձատրուի վերջին արարուածին մէջ: Յարգանքի և ակնածանքի գաղափար չունին բնաւ, եւ երբ կը լսեն հրապարակային քարոզիչներուն յորդորները, սրամիտ կատակաբանութիւններով կ'ընդմիջեն զանոնք:

Երբ վաստակն այնքան քիչ ըլլայ որ փոքր լրագրավաճառը առանց դրամի ու առանց պատսպարանի միայ, իր զլխաւոր մտադրադումն է գերծ մնալ ապահովութեան պաշտօնեայի մը հոգածութենէն: Ոմանք կ'երթան կը փողին մարած չոգեչարժ մեքենայի մը վանդակին վրայ, ուրիշներ կը քնանան լրագրաց տպարաններու սանդուխներուն վրայ որք մինչեւ առտու բաց են, բայց մեծագոյն մասը պարապ տակառներու

մէջ կ'ապաստանին: Օրուան բնակարանն այս է: Այս խեղճ տղաքը անգիտակցաբար ընդունած են Դիոգինէսի փրկիստփայութիւնը:

Ամենէն անողորմ զրկանքները չեն այլալիւր այս փոքր թափառիկներուն զուարթութիւնը: Մայթին վրայ ապրելու վարձուած, ընտանեզուրկ, առանց բնակարանի, ապրուստի միակ միջոց ունենալով ողորմելի արհեստ մը, իրենց միակ հոգն է արձակ կեանքը պահել: Իրենց վիճակին շահագրգռուող ամէն ողորմած մարդ բնազդական կասկած մը կը ներշնչէ իրենց, իրենք մարդասէրը կը նկատեն իրրեւ թշնամի մը: Եթէ տեղեկութիւն հարցուի իրենց հօրն ու մօրը վրայ, եթէ լրագիրներու օրուան վաճառումէն գոյացած հասոյթներուն վրայ անխորհրդապահ հարցումներ ուղղուին իրենց, ծուղակի մը հօտը կ'առնեն ու խուսափողական պատասխաններ կուտան: Այս հոգածութեան ցոյցերը կասկածելի են իրենց, վասն զի կը վախճան որ վիճակակից կ'ըլլան նախկին բազմաթիւ ընկերներու, որոնք բարեգործական ընկերութիւններ հաւաքելով փողոցներէն դրած են հաստատութեանց մէջ ուր անոնք կը սորվին լուրջ արհեստներ, պարկեշտօրէն ճարելու համար իրենց ապրուստը:

Փոքր լրագրածախը չվախճար աշխատութենէ և իր բանած արհեստը բաւական տաժանելի է, բայց իր վարժած կենցաղէն զրկուելու գաղափարին հետ չհաշտուիր:

Այդ պզտիկները լաւագոյն կը սեպեն ստամոքսը պարապ պառկիլ եւ տակառի մը մէջ քնանալ քան երջանկութիւն վայելել այն ընդարձակ շէնքերուն մէջ, որք առողջապահական էն նուրբ սկզբանց համեմատ շինուած են, այլ ուրկէ անկարելի է դուրս ելլել ուզուած ատեն:

Երբեք փոքր լրագրավաճառները չպիտի գիշանէին մտնել Պրուս Մեմօրիլ Լօնիկ Հաուզի դռնէն ներս. եթէ այս հաստատութեան հիմնադիրը ձրիապէս ասպնջականէր զիրենք:

Այս հաստատութիւնը հիմնող բարեբարը մէկ միլիոնէն աւելի ծախսած է. հարիւր վաթսուներ ութը փոքր լրագրավաճառներ կը պատսպարուին հոն ամէն գիշեր:

Այս փոքր վաճառականներուն արժանապատուութիւնը խնայելու գիտումով՝ մէկ գիշերուան համար 60 փարայի գումար մը կ'առնեն։ Լուսագոյն միջոցն է այս՝ զանոնք ապահովցնելու եւ համոզելու թէ իրենց գործը պանգոկապիտաներու հետ է եւ ոչ թէ մարդասէրներու որք կրնար ըլլալ որ թող չտային իրենց դուրս ելլել յաջորդ առտուն։ Բոլոր ճաշերուն գինը միօրինակ կերպով 60 փարայ է։ Ճաշը թերեւս չունենայ պէսպիսութիւն, բայց կերակուրը անհրապար է եւ այնչափ խնամով պատրաստուած որչափ երկրորդ կամ երրորդ կարգի գոլէճներու մէջ։

ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ԱՐԲԱՆԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ

Կիւլպէնկեանց բարեհամբաւ Ազգատոհմին փայլուն շառաւիղներէն էր լուսացեալ Հափաճ Բարթոլ, բնիկ Թալասի որ 1827ին միջոցները Աղեքսանդրիա գալով՝ իր բաղդը շինած եւ զանազան կալուածներ գնելէ զատ, գիւղատէր ալ եղած էր։

Ահա՛ այդ բարեյիշատակ զարգացեալ Հայուն ազնուասիրտ որդին է Վսեմ։ Արահամ Փաշա Բարթոլ, որ վեց տարեկան հասակին մէջ որբ մնացած, եւ տեղական Ֆրանսական վարժարանին մէջ բաւական ուսում առնելէ յետոյ, ինքնագնութեամբ իր լուսահոգի հօրմէն ժառանգած հողերը մըշակել տալով՝ ընդարձակած, Եգիպտական առեւտրական եւ սեղանաւորական հրապարակին վրայ ալ, իրբեւ կալուածատէր ու պալիսի, կարեւոր դիրք մը գրաւած է։

Նորին Վսեմութիւնը հետզհետէ գնահատուելով տեղական կառավարութենէն՝ 1876ին չորրորդ, եւ 1877ին երրորդ Մէծիօյի պատուանշանները ստացած է։

Նոյնպէս, 1883ին՝ Միւթէմայիգի աստիճանին բարձրացաւ եւ 1885ին՝ երրորդ կարգի Օսմանիյէ ընդունեց։

Այս անգամ եւս գնահատուելով նորին Վսեմութեան անժխտելի արժանիքը եւ մատուցած ծառայութիւնները, Միւթիւրանէլ-Րաֆիյայի (Վաշայութեան) աստիճան շնորհուեցաւ։

Մեր խորին ու սրտագին շնորհաւորութիւնները Նորին Վսեմութիւն՝ Արահամ Փաշա Բարթոլ Պէյին։

ԳՈՒՆԱԿՈՐ ԶԻՒՆ

Կերեւայ թէ կարմիր ձիւնի երեւոյթը բաւական յաճախող է Դիտուած է Սէն-Պէռնարի, Պրէվէնդի վրայ, Սէնէի եւ Պոնտի կիրճերուն մէջ, Մօն-Պլանի եւ Թիւրօի ալպեաններու գագաթը։ Հին ատեններն ալ ճանչցած ըլլալու են զայն, վասն զի Արիսթոտէլ Պլինիոս կը խօսին անոր վրայ։

Զի կրնար ըսուիլ թէ կարմիր կը ձիւնէ, վասն զի երբեք տեսնուած չէ, այլ ձիւնը տեղալէն ետքը կը գունաւորիւր եւ այն ատեն կարմիր խաւը որ չորս հինգ հարիւրորդամէթը թանձրութիւն ունի, մշտակայ է։ Կրնայ նորէն ծածկուիլ ճերմակ ձիւնով որ չի գունաւորուիր չփումէն, եւ չի կրնար ալ գունատել զայն՝ հետը խառնուելով։

Այս ձիւնին հալումէն առաջ եկած ջուրը քննուած է շատ գիտուններու կողմէ որոնք հաստատած են թէ կարմիր գոյնին պատճառն են փոքր կլոր գնդակիկներ կենդանի կարմրութեամբ, որք շարուելով գիշեր կը ձեւացնեն։ Ասիկա առաջին քայլ մըն էր դէպի ճշմարտութիւն։

Կարմիր ձիւնն, ըսած է Շէվիլ նաւապետը, երբեմն ահագին անջրպետներ կը ծածկէ, բայց երբեմն ալ կը գտնուի տեղ տեղ ցանուցիւր։ Ֆրանսիոյ Պաննըր տարրալուծած է Պաթէիի ծոցէն բերուած կարմիր ձիւնը որ համանման է Ալպեաններու ձիւնին հետ, եւ գունաւոր ձիւնին մէջ գտեր է գաղտասեր ճշմարիտ տունկ մը, որ լօռերուն պէս կ'աճի, հասուննալուն կը ճեղքուի եւ այն ատեն իր շուրջը կարմիր հունտ մը կը թաղու առատութեամբ։ Այս փոշիէն սըփուներ է սառին վրայ, իր տանկի բոլոր հանգամանքովը ծլեր է հոն եւ առանցքանին մակերեսը ամբողջովին կարմրեր է անկեց։

Վրանկէլ կարմիր ձիւնը զննեց Շուէտի հիւսիսակողմը եւ լուսազգիի մը ներկայութիւնն հաստատեց անոր մէջ։ Շուէտացի բուսաբան մը՝ Սկարա, Բրգոֆօքիւս Յիվալիս անունով միւրտեց այս շահեկան երեւոյթն յառաջ բերող գործարանաւոր էակը։

Հիմակուան գիտութիւնը կը նկատէ այս տոնէկը իբր միջրոպ մը, մին այն արարածներէն, ոչ կենդանի՝ ոչ բոյս, որոնց ցեղը

քնացած էին որոգայթին տակ : Քամարկի մէջ, դժպհի կերպով մը կը ջարդեն զանոնք : Դուք գիտէ՞ք թէ ծիծեռնակը չի կրնար թողուլ իր վիրաւորուած քոյրերէն մէկը առանց անոր օգնութեան փութալու : Քամակի որսորդը անոր դէմ սա վարպետութիւնը կը բանեցնէ : Իր ծուղակներուն մէջ կը դնէ մէկ թեւը ջախջախուած ծիծեռնակ մը, իր ընկերները բազմաթիւ խումբերով կուգան ու կը կենան թակարդին քով : «Բարկութեամբ ու անախորժութեամբ տեսած եմ որոգայթին յանկարծ մէկ հարուածով 300 ծիծեռնակ վերցնելը» : Կ'ըսէ այս որսորդութեան ականատես մը : Գրեթէ նոյն ձեւովն է որ կը բռնեն որինքը՝ գիշերուան մէջ : Անոնցմէ հատ մը ողջ կը պահեն, կրփակէն ուժով մը կը կապեն, թեւերը դէպ ի հողին սեւեռած, կը պոռայ ու կը շարժուի կատաղաբար : Իր ձայնէն, միւս որինքը արագօրէն իրեն օգնելու կու գան : Բանտարկուածը, ինքզինքը զարնելով, կը տուցովը ու ճանկերովը կը բռնէ բոլոր անոնք որոնք իրեն կը մօտենան, եւ զանոնք թռչնորսին կը մատնէ անգիտակցօրէն :

Ծիծեռնակին միւս կարծր է ու զանի մեռցնելն ալ անգթութիւն է պարզապէս : Բայց իր եղբայրը, քարածիծառը, անկէ աւելի պարարտ, սքանչելի պատառ մըն է : Սովորացիները եւ Բիէմոնցիները ածոր խենթը կ'ըլլան ու կ'որսան անգթօրէն : Իր թռիչքին արագութիւնը գիտեն : Քարածիծառները 80 փարսախ կը թռչին մէկ ժամուան մէջ, 320 քիլոմէթր : Ուրուկանին կարեւորութիւն չեն տար ու իրենց հակառակորդը միայն փայլակն է Ու եւ է արագութեամբ մը գացած ատենին չեն կրփնար դիւրաւ խոտորիլ ճամբէն : Շինականները գիտեն ասիկա : արդ յարմար հեռաւորութեան մը մէջ կը հաստատուին, զանգակատան մը բարձրը, օրինակիչ համար, անոնց անցքին վրայ դարանակալ կը սպասեն ու գաւազանով զանոնք կը ծեծեն : Զանթա կղզիին մէջ, չարածճի տղաքներ կարգով կեցած կ'որսան զանոնք : Երբ քարածիծառներու թռիչքի մը նշանը տրուի, պատուհաններուն առջեւը կը նստին ու փետուր մը վար նետելու կը զբաղին, որպէսզի հրապուրուի թռչունը ու գայ բռնել զայն իր բոյնը տանելու համար : Տղայ մը

ստանկով օրը հինգ-վեց երկվեցեակ կը բռնէ :

Լօրէնէն եւ Պուրկոններէն աւելի՛ հեռուն, այլ ա'յնքան կոտորիչ, Հարաւային նահանգները թռչուններուն մահուան երկիրներն են : Բնական ճամբան է աս որուն կը հետեւին իրենց տարեկան տեղափոխութեան միջոցին, եւ ճամբորդութիւնը իրենց միսին ամէնէն փափուկ համը տուած է :

Երբոր նաբոլիէն կամ Իշխաէն շոգենաւով բաժնուիք, Սորէնդոյի բլուրներուն գագաթը պիտի նշմարէք երկար ու կրկնակ շարք մը որոգայթներու, տասնհինգ մէթրի չափ բարձր զոր նաբոլիցիները հնարքներով կը վարեն առագաստներու պէս : Թռչունները որոնք մէկ ծովածոցէն միւսը կուգան, իրենց թռիչքներուն միջոցին անոնց մէջ կը բռնուին : Լեյս խաղաղիկ գիւղանկարին մէջ, այս կատարելապէս կապոյտ երկինքին տակ, հանդարտիկ ու ինկահոտ օդին մէջ, բանտարկուած թռչուններուն այս յուսահատ ձայները վրանիդ անհուն տխրութեան մը տպաւորութիւնը կը թողուն :

* *

Եւ սակայն արարքները մեզ կը ծանուցանեն : Ուր որ թռչունը աւերած է, հոն միջատը իր վրէժը առած է անկէ : Տարի մը, Պուռպօն կղզիին մէջ, մարթինահաւին գլուխը կտրեցին : Մարտինները եկան ու աւերեցին կղզին : «Ի՜նչ առաջ, Ռուանի մօտ, կը պատմէ մեզի Միշլէ, որինքը տարագրուած էին ժամանակէ մը ի վեր : Զօրեակները ատկէ անսկ օգուտ քաղեցին, իրենց անհուն կերպով բազմապատկուած թրթուրները ստորերկրի աշխատութիւնին այնքա'ն առաջ տարին, որ ամբողջ մարգագետին մը զոր ինծի ցուցուցին իր մակերեւոյթէն չորցած էր : Խոտերուն ամէն արմատները կրծուած էին, ու ամբողջ մարգագետինը, դիւրաւ քակուած, իր վրայ դարձած, կարելի էր գորգի վր պէս վերցընել :» Ճնճղուկը նոյն իսկ, բանջարապաններէն անիծուած ճնճղուկը, Անգլիայէն վճատուած եւ որուն դեռ նոյն անհետացումը կը հարցնէր Սէնի ընդհանուր ժողովը, ճնճղուկն ալ ունի իր հասարակաց օգտակարութեան վկայականը : Հունգարիոյ մէջ որսացած էին, զայն յիշել պէտք եղաւ,

ջորեակներու գունդեր, որոնց մինակ թըռչունը կրնայ յաղթել, իր մեկնումէն ի վեր կը կլէին դաշտերը: Առանց անոնց, չպիտի ունենայինք ո՛չ մէկ ծառ փողոցներու եւ հանրային պարտէզներու մէջ:

Պահենք ու պաշտպանենք մեր թռչունները: Բարի օրէնքներ քուէարկուած էին 1874ի Ծերակոյտին կողմէ որսորդութեան օրէնքները կազմաւորելու համար, մասնաւորապէս արտոյտի որսորդութեանը. դեռ ուրիշներ ալ, 1893ի յուլիսին մէջ, վերջապէս, 1897ի նոյեմբերին մէջ, ֆրանսական թռչնաբանական դաշնակցութիւնը, էքսան-Բուսիէնսի մէջ, ծուղակով, թակարդով, որոգայթով որսորդութիւնը արգիլող խորհուրդներ ներմուծած է: Մաղթենք որ այս օրէնքներն ու կարգադրութիւնները ազդու ըլլան:

Թարգ. ՎԱՀՐԱՄ Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Վ Ե Ր Ձ



ՈՍԿԾ ԲԶԵԶԸ

(Շարունակութիւն 34րդ թիւէն)

Ժիւրիդէր առաւ ուրեմն մագաղաթը, անոր մէջ փաթտեց միջատը եւ գանիկա ինծի տուաւ: Ի՛նչ մը ետքը խցիկիս ճամբան բռնեցինք, եւ հանդիպեցանք Ժ... տեղակալին: Անոր ցցուցի միջատը, եւ ան աղաչեց որ թոյլ տամ իրեն տանիլ ամբողջը Հաւանեցայ, եւ անիկա իսկոյն իր բաձկոնին գրպանը դրաւ առանց մագաղաթի՝ որ անոր իբր պահարան կը ծառայէր եւ զոր ձեռքս կը բռնէի, մինչ ան կը քննէր միջատը եւ կարելի է վախցաւ որ դիտաւորութիւնս կը փոխեմ, եւ յարմար սեպեց նախ վստահ ըլլալ իր աւարին վրայ:

Մի եւ նոյն ժամանակ, առանց ըրածիս գիտակցութիւնը ունենալու, ես ալ մագաղաթը գրպանս դրի:

Կը յիշէք որ երբոր սեղան նստեցայ բըզէզին ուրուագիրը շինելու համար, թուղթ չի գտայ հոն՝ ուր կը դնէի սովորաբար: Փնտռեցի դարանին մէջ: Հոն ալ չի կար: Գրպաններս նայեցայ, յուսալով գտնել հին

նամակ մը, երբ մատներս հանդիպեցան մագաղաթին: Այս ամէն պարագաները կարգով կը մանրամասնեմ ձեզի, աղէկ ճշդելու համար թէ ի՞նչ պարագաներու տակ մագաղաթը ձեռքս ինկաւ, որովհետեւ այս ամէնը իմ միտքս գրաւեցին:

Անշուշտ, պիտի կարծէք թէ կ'երագեմ, բայց բանն այն է որ այս վայրկեանէն սկըսած տեսակ մը կապ հաստատած էի: Մեծ շղթայի մը երկու օղակները մօտեցուցած եւ միացուցած էի. մէկ կողմէն ծովեզերքը խըրած նաւ մը, եւ միւս կողմէ՝ ո՛չ հեռու այս նաւէն, մագաղաթ մը — ո՛չ քուղք մը — որու վրայ գանի մը նկարուած էր: Քնակա՜նաբար պիտի հարցնես՝ « Ո՞ր է կապը »: Կը պատասխանեմ՝ որ գանկը կամ մեռելի գլուխը ծովահէններու շատ ծանօթ խորհրդանշանն է:

Ըսի որ ստիկա մագաղաթի կտոր մըն էր եւ ո՛չ թէ թուղթ: Մագաղաթը տեսական, գրեթէ անկորնչելի բան մըն է: Շատ քիչ անգամ մագաղաթին կը յանձնեն անկարեոր յիշատակարանները, նկատելով որ թուղթը միայն կը յարմարի գծագրութեան կամ գրութեան: Այս խորհրդածութիւնը զիս առաջնորդեց մտածելու որ մեռելի գլուխին մէջ որ եւ է յարաբերութիւն մը, միակ իմաստ մը կար: Այլ եւս զանց չէի ընել տեսնել մագաղաթին ձեւը. թէեւ անկիւններէն մէկը պատահարով մը ջնջուած էր, սակայն դիւրին էր տեսնել թէ նախնական ձեւը երկարածեւ էր. ասիկա ուրեմն անժըխտելի կերպով մէկն էր այն կտորներէն՝ զորս կ'ընտրեն նշանակելու համար կարևոր յիշատակարան մը եւ պահել խնամքով:

— Բայց, ընդմիջեցի ըսիք թէ գանկը մագաղաթին վրայ չէր՝ երբ բզէզին ուրուագիրը շինեցիք: Ի՞նչպէս ուրեմն կրնայիք յարաբերութիւն մը հաստատել նաւին եւ գանկին միջեւ, որովհետեւ այս վերջինը ձեր իսկ խոստովանութեան համեմատ, պէտք է գծուած ըլլայ — Աստուած գիտէ ե՞րբ եւ որով՞ — ձեր գծած բզէզի ուրուագրին ետեւը:

— Ա՛հ, հոտ է արդէն ամբողջ գաղտնիքը. թէեւ հանելուկին այս կէտը լուծելու համար բաղդատաբար քիչ յոգնեցայ. իմ մէթոտս սպահով էր, ու միայն մէկ՝ արդիւնքի կրնար յանգիլ: Օրինակի համար

այսպէս կրօնորձամբանեմ. « Երբ գծեցի բը-
գեցր, մագաղաթին վրայ տեսանելի գանկ
չիկար: Երբ աւարտեցի գծագրութիւնս,
ձեզի տուի, եւ չեղ կը գիտէի մօտէն՝ մին-
չեւ որ մագաղաթը ինձի արտիք. հետեւա-
բար դուք չէիք որ գծագրած էիք գանկը,
ոտրեմն այս քանկին պատկերը ո՛ր է մարդ-
կային գործ յը չէր, եւ տակայն հո՛ն աչ-
քեմնուս առջեւն էր:

Իմ խորհրդածութիւններուս այս կէտին
հասնելով, կը յիշէի այն բոլոր պատահա-
րները, որ տեղի ունեցան խնդրի առարկայ
եղած ատենը: Օդը ցուրտ էր — ճհ, հագ-
ուագիւտ ու երջանիկ պարագան — և բա-
կրակ մը կը վառէր կրակարանին մէջ. ես
բաւական տաքցած էի ըլլած արշաւանքս,
և սեղանին մօտ նստած: Դուք ընդհակա-
ռակը, ձեր աթոռովը մօտեցած էիք կրա-
կարանին առջիւր այն վայրկեանին՝ ուր մա-
գաղաթը ձեռքդ դրի, եւ պիտի քննէիք
դանի, շունս ներս մտաւ եւ ցատկեց ուսե-
րուդ վրան: Ինչքան զանի կը գգուէիք ձախ
ձեռքով՝ եւ զանիկա հեռու կը բռնէիք, ան-
փութօրէն՝ ձգելով աջ ձեռքդ, որ ծունկե-
րուդ միջեւ եւ կրծկին շատ մօտ կը բռ-
նէր մագաղաթը: Վայրկեան մը կարծեցի
թէ բոցը պիտի հասնէր եւ ձեզի պիտի ի-
մացնէի, բայց բառ մը կարենալ արտասա-
նելէ առաջ, զանիկա քաշած եւ քննելու
սկսած էիք: Երբ այս ամէն մանրամասնու-
թիւնները նկատողութեան առի, վայրկեան
մը իսկ չկասկածեցայ թէ ջերմութիւնն է այն
ազգակը՝ որ մագաղաթին վրայ երեւոց
գտնվը՝ զոր կը տեսնէի հոն գծուած: Կա-
տարեւապէս գիտէք որ անյիշատակ փա-
մանակներէ ի վեր գոյութիւն ունին տար-
բառնական պատրաստութիւններ՝ որոնց
օգնութիւնով թուղթին կամ մագաղաթին
վրայ կրնան գրել նշանագրեր՝ որոնք մի-
այն կրնան ազդեցութեան տակ կը տես-
նուին:

Ասոր համար երբեմն կը գործածեն սառ-
ըրկամ անմաքուր քօպալթի թթուածնատ՝
որ արքայաջուրով յագեցած՝ եւ իր ծան-
րութեան չորս անգամը ջուրի մէջ լուծուած
կ'ըլլայ, ասկէ առաջ կուգայ յիշանշ ներկ
մը: Բնկիւլ sp. f. օպալթը՝ բուրակի ոգիի մէջ
մէջ լուծուած՝ կուտայ կարմիր գոյն մը:
Այս գոյները կ'աներեւութանան երբ պա-

ղին այն առարկաները՝ որոնց վրայ գրուած
է, բայց նորէն կ'երեւան՝ երբ ջերմութեան
ենթարկուին:

Այն ատեն մեռելի գլուխը աւելի մեծ
խնամքով կը քննէի: Արտաքին շրջագիծերը՝
այսինքն մագաղաթին եզերքին ամէնէն ա-
ւելի մօտինները, միւսներէն աւելի որոշ
էին: Բացայայտ էր որ ջերմութեան ազդե-
ցութիւնը անկատար կամ անհաստատ չեղած
էր: Իսկոյն կրակ վառեցի եւ մագաղաթին
իւրաքանչիւր մասը ենթարկեցի զօրաւոր
ջերմութեան մը: Նախ գանկին քիչ մը տրծ-
գոյն գիծերը մէջտեղ ելան, բայց փորձը
կրկնելով, թուղթին մէկ անկիւնը, ըսեմ
այն անկիւնը՝ ուր մեռելի գլուխին գրծ-
ուած անկիւնին դէմ շեղակի դրուած է, տե-
սայ երեւիլը պատկերի մը՝ զոր այժ մը կար-
ծեցի: Սակայն աւելի ուշագիւր քննութիւն
մը հաստատեց որ անով ուղած էին ներկա-
յացընել ուլ մը:

— Հա՛, հա՛, ըսի, անշուշտ իրաւունք
չունիմ ձեզի շատ ծաղրելու. մէկուկէս
միլիոն տոլար խիստ լուրջ խօսք մըն է դա-
նիկա կատակի դարձնելու համար. բայց
դուք ձեր շղթային իրրեք օղակ մըն ալ
չէք աւելցնել կոր. դուք ու եւ է կապ մը
չպիտի գտնէք ձեր ծովահէններուն եւ այ-
ծին միջեւ: Գիտէք թէ ծովահէնները գործ
չունին այժերուն հետ՝ որոնց սնուցումը ա-
գարակապաններուն կը վերաբերի:

— Բայց ձեզի բախտէ պատկերը այժի
մը պատկերը չէր:

— Լա՛ւ թող ուլ ըլլայ, գրեթէ մի եւ
նոյն բանն է:

— Գրեթէ բայց ո՛չ ամբողջովին, ըսաւ
Լըկրէնտ: Դուք Գիտտ անունով նաւապետի
մը վրայ խօսուիլը լաւ էք. եւ դուք գի-
տէք որ քի՞մ անգլիերէնի մէջ կը նշանակէ
ուլ: Իսկոյն այս կենդանիին պատկերը նը-
կատեցի իբր խորհրդանշան բազալադի մը
կամ իբր մեհենագրող ստորագրութիւն մը:
Շեղակի անկիւնը դրուած մեռելի գլուխը
նոյնպէս նշանի մը երեւոյթն ունէր: Բայց
չարաչար խռովեցայ, բոլորովին տարբեր
նշան մը չի գտնելով, բսել կ'ուզեմ նոյն իսկ
յիշատակարանին հոգին, իմ գրչագրիս բը-
նագիրը:

— Այսպէս կ'ենթադրեմ թէ կ'ապա-
սէիք գտնել նախակ մը՝ անշունք եւ ստծրագ-

լուծեան միջեւ:

— Այդ տեսակ բան մը, բանն ա՛ն է որ ինքզինքս անդիմադրելի կերպով թափանչած կըզգայի լաւ բաղդի մը կանխադրեցումին մէջ: Չեմ գիտեր ինչո՞ւ, բայց պիտի հաւատայի՞ք որ Ժիւրիգէրի սա խօսքը՝ թէ բղէզը ձոյլ ունի էր, յայտնի ազդեցութիւն մը բրած ըլլայ երեւակայութեան վրայ: Եւ ապա պատահական միջադէպերու եւ դիպակցութիւններու շարքը ճշմարտապէս այնքա՛ն տարօրինակ էր: Դիտած էք որ արդարեւ բոլորովին պատահեցան միեւնոյն օրը՝ երբ ցուրտ էր եւ պէտք էր կրակ վառէինք, եւ առանց կըրակին, առանց շունին միջամտութեան՝ ճիշդ այն վայրկեանին ուր ան երեւցաւ, բնաւ չպիտի ճանչնայի մեռելի գլուխը, եւ երբէք չպիտի տիրանայի այս գանձին:

— Աւարտեցէ՛ք, անհամբեր ձեզի մտիկ կ'ընեմ:

— Է՛հ, լաւ, անշուշտ լսած էք պատմութիւնը կարգ մը պատմութիւններու, որ կը վիստան. ամէնուն պէս լսած չե՞ս անորոշ զրոյցներ՝ Գիտտի եւ իր ընկերներուն Ատլանտեանի եզերքներէն մէկ կողմին վրայ գանձեր թաղած ըլլալուն մասին: Այո՛ զբոյցները անշուշտ հիմ մը ունէին: Եւ ուրովհետեւ ասոնք այսչափ երկար ատենէ ի վեր չընթերցուածն էին, եւ ըստ իսմիայն մէկ պարագայով մը կրնային բացատրուիլ, ըսել է թէ թաղուած գանձը միշտ թաղուած մնացած եւ: Եթէ Գիտտ իր աւարը պահած էր Ժամանակ մը եւ յետոյ նորէն առած՝ այս զրոյցները հաւանաբար մինչեւ մեզի հասած չպիտի ըլլային իրենց արդի եւ անփոփոխ ձեւին տակ: Դիտեցէ՛ք որ այս բոլոր պատմութիւնները կը շրջին գանձ փնտռողներու բերանները եւ ոչ՝ գանձ գտնողներու: Եթէ ծովահէնը առած էր իր ստակը, գործը հոգ լմնցած պիտի ըլլար: Կը խորհէի որ ո եւ է պատահար մը, օրինակի համար ճիշդ տեղը ցուցնող ծանօթութեան կորուստը պիտի զրկէր զանի գանձը գտնելու միջոցներէն:

Մտածեցի որ այս պատահարը ճանչցած էին իր ընկերները՝ որ առանց այս ծանօթութեան երբէք չպիտի գիտնային թէ թաղուած գանձ մը կայ, եւ իրենց ապարդիւն փնտռութիւններովը, որովհետեւ առաջ-

նորդ մը չունէին, ծնունդ տուած էին այս տիեզերական տարածուած զրոյցին՝ որ այսօր ամէն բերաններու մէջ է: Երբէք լսած էք խօսուիլը կարեւոր գումարի մը վայ՝ զոր գտած ըլլան ծովագետքէն:

— Երբէ՛ք:

— Արդ, ամէն մարդ գիտէ թէ Գիտտ հաւաքած էր անհուն հարստութիւն մը: Իբրեւ ընդունուած բան մը կը նկատէք թէ հողը տակաւին կը պահէր զանոնք, եւ չի պիտի զարմանաք երբ ըսեմ թէ յուսացի, — յոյս մը՝ որ վստահութեան կը հասնէր. — այնքան տարօրինակ կերպով ձեռք բերուած մագաղաթին մէջ գտնել կորսուած նշանը այն տեղին՝ ուր գանձը գրուած էր:

— Բայց ինչպէ՞ս այս համոզումը գոյացուցիք ձեր մէջ:

— Մագաղաթը նորէն կրակին ենթարկեցի, զանիկա արծարծելէ ետք՝ աւելի ջերմութիւն մը ստանալու համար, բայց ոչինչ երեւցաւ: Սակայն ինքիւրենս ըսի որ աղաի խաւը կրնար մատ ունեցած ըլլալ այս անյաջողութեան մէջ. ուստի մագաղաթը լուացի խնամքով՝ վրան տաք ջուր թափելով, ու երբ ասիկա ըրի, զանիկա դրի թիթեղէ սանի մը մէջ, գլուխը տակի կողմը, եւ սանը դրի վառած ածուխի վրայ: Քանի մը վայրկեանէն, սանը կատարելապէս տաքցած ըլլալով, վերցուցի մագաղաթը եւ չեմ կրնար բացատրել ուրախութիւնս՝ երբ անոր վրայ կէտկիտուած տեսայ նշաններ՝ որ կարգով շարուած թուանշաններու կը նմանէին: Չանիկա նորէն դրի սանին մէջ եւ հոն թողուցի վայրկեան մըն ալ. երբ զանիկա առի, ճիշդ այնպէս էր՝ ինչպէս որ պիտի տեսնէք հիմա:

Հոս կ'ըկիւնտ մագաղաթը նորէն տաքցուցած ըլլալով՝ զանիկա քննութեանս յանձնեց: Հետեւեալ կարմիր նշանագիրները երեւցան կոշտօրէն գծուած՝ մեռելի գլուխին եւ ուրին միջեւ.

$53 \times \times + 305) 6^* ; 4826) 4 \times \cdot ; 48 + 8 \parallel 60) 85^* ; 1 \times (: \times^* 8 + 83(88) 5^* + ; 46 (: 88^* 96^* ? ; 8^*) \times (: 485) ; 5^* + 2^* \times (: 4956^* 2 ; 5^* - 4) 8 \parallel 8^* ; 4069285 ; 6 + 8) 4 \times \times ; 1(9 \times ; 48081 ; 48 + 85 ; 4) 485 + 528 806^* 81 (\times 9 ; 48 ; (88 ; 4 (\times ? 34 ; 48) 4 \times ; : 161 ; : \times ? ;$

— Բայց, ըսի, անոր տալով մագաղաթի կտորը, ասոր վրայ բացորոշ բան մը չեմ տեսներ: Եթէ կօլքօնդի բոլոր գանձերը

ինծի պատկանելու ըլլային, այն պայմանով որ այս հանելուկը լուծեմ՝ կատարելու պէս վստահ եմ որ չպիտի կրնայի ձեռքս վրան դնել:

— Եւ սակայն, րսաւ Լըկրէնտ, լուծումը ձեր առաջին ակնարկով երեւակայածին չափ դժուար չէ: Դիւրին է խելոյն գուշակել թէ այս նշանագիրները կը կազմեն ծածկալորութիւն մը, այսինքն թէ՛ խմատ մը կը ներկայացնեն: Արդ, հաստատուելով Քիտտի վրայ ամենուն դիտցածին վրայ, չէի կրնար ենթադրել թէ՛ ան կարող էր չինած ըլլալու ծածկագրութեան կատարելադրութիւն մը: Ասկէ նախ հետեւցուցի թէ՛ աչքիս ունեցածս պարզ բան մըն էր, բայց այնպէս մը որ՝ նաւազին խորունկ իմացականութիւնովը, բացարձակապէս անլուծելի էր առանց բանալիին:

— Եւ զանիկա լուծած էք:

— Դիւրութիւնով: Ատոր երկու հապարանգամը աւելի կնճռոտները լուծած եմ: Պարագաները եւ միտքի տեսակ մը միտում գիտարին շահագրգռուիլ այս տեսակ առեղծուածներով. և կը կասկածիմ որ մարդկային հնարամտութիւնը կարենայ չինել այս տեսակ հանելուկ մը՝ զոր լուծելու չի յաջողի մարդկային հնարամտութիւնը՝ բաւականաչափ ջանքով մը: Ուստի, անգամ մը որ ընթերցելի նշանագիրներու ձեռագիր մը մէջտեղ հանեցի, հալիւ կը խորհէի անոր նշանակութիւնը հասկնալու դժուարութեան վրայ:

Այն իրողութեան մէջ՝ որուն վրայ կը խօսինք — և զաղտնի գրութեան բոլոր պարագաներուն մէջ — առաջին խնդիրը ծածկագրութեան լեզուն կարգադրելն է, որովհետեւ լուծումի սկզբունքները, մանաւանդ երբ ամենապարզ ծանօթագրութիւններու վրայ է խնդիրը, կը փոփոխին իւրաքանչիւր ազգաբարբառի ոգին համեմատ, եւ հետեւաբար անկէ կախում ունին: Ընդհանրապէս հաւանականութիւններու հետեւելով, յաջորդաբար կը փորձեն իւրաքանչիւր ծանօթ լեզուները՝ մինչեւ որ յաջողին: Արդ, ունեցած ծածկագրութեան մէջ, ամբողջ դժուարութիւնը հարթուած էր ստորագրութիւնովը: Քիսս բառին վրայ բառախաղը անգլիերէն լեզուին մէջ կարելի է: Առանց այս պարագային, իմ փորձերս

սկսած պիտի ըլլայի սպաներէնով կամ ֆլորանսերէնով, իրեւ այն լեզուները՝ զոր սպանիացի ծովահէնները գործածած պիտի ըլլային ծածկելու համար այս գաղտնիք: Ուրեմն հասկոյայ որ ծածկագիրը անգլիերէն է: Կը նշմարէք որ բառերուն միջեւ պարապ տեղ չիկայ: Եթէ պարապ տեղ կեցած ըլլար, գործը աւելի դիւրին պիտի ըլլար: Իյս պարագային պիտի ուրէի դասակարգել եւ վերլուծել ամենակարճ բառերը, եւ եթէ գտնէի, ինչպէս միշտ հաւանական է, մէկ գիրով բառ մը կը համապատասխանէ անգլ. a կամ i (մէկ կամ ես) բառերուն, լուծումը ապահովուած պիտի նկատէի: Բայց որովհետեւ պարապ տեղ չիկար, իմ մեկնակէտս պիտի ըլլար հասկնալ թէ ո՞ր գիրերը աւելի շատ կային եւ որո՞նք աւելի քիչ: Զանոնք ամենն ալ համըլցի եւ չինեցի հետեւեալ ցուցակը:

8 նշանագիրը կը գտնուի 33 անգամ

—	—	26	—
4	—	19	—
× Լ)	—	16	—
*	—	13	—
5	—	12	—
6	—	11	—
+ Լ	—	8	—
0	—	6	—
9 Լ 2	—	5	—
: Լ 3	—	4	—
?	—	3	—
	—	2	—
— Լ .	—	1	—

Արդ, անգլիերէնի մէջ այն գիրը՝ որուն ամենէն յաճախ կը հանդիպինք՝ *e*ն է: Միւս գիրերը սա՛ կարգով կը յաջորդեն իւրարու. *a. o. i. d. h. n. r. s. t. u. y. c. f. g. l. j. m. w. b. k. p. q. x. z.* Եին յաճախագիրութիւնը այնքան նշանաւոր է որ շա՛տ հաղուագիւտ է գտնել նախադասութիւն մը՝ որու գլխաւոր նկարագիրը չըլլայ ան:

Մնացեալն յաջորդ թիւով:



ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ԿԱՌԻՔԵՐՈՒ ՄԷՋ ՔՆԱՆԱԼ

Անոնք որ 8-10 ժամ անդադար երկաթուղիի մը կառքին մէջ կը ճամբորդեն՝ գիտեն թէ մարդ որքան փափաքով տեղ մը կը փնտռէ պահ մը գլուխը վրան հանգչեցնելու համար։ Վերջերս գերմանացի հրնարիչ մը նոր գործիք մը գտած է որու շնորհիւ ճամբորդ մը պիտի կրնայ առանց նեղուելու ժամերով վաւիտի մը մէջ ճամբորդել, նստած դիրքին մէջ։ Այս գործիքը



կը բաղկանայ պարզապէս վրան թաւի՝ կամ կակուղ բարձիկ մը գամուած տախտակէ մը որ չորս ծայրերէն կախուած է կառքին ցեղունէն եւ անանկ դիրք մը բռնած է որ ճամբորդ մը կրնայ երկու արմուկները վրան կախնել կամ գլուխը հանգչեցնել՝ առանց նստած տեղէն ելլելու։

Այս դրութեամբ կարելի է նաեւ վաւիտներուն մէջ կարգալ՝ գիրքը այդ գործիքին վրայ բռնելու՝ ինչու որ կառքին ցնցումները չեն ազդել այդ պզտիկ օրրանին։

Համագիտակի ներկայ թիւն հրատարակելու առթիւ, կը խնդրենք մեր ազնիւ բաժանորդներէն եւ գործակալներէն որ բարեհաճին այլ եւս հաշիւները փակել. որովհետեւ շարունակ այսպիսի գեղոյցներ դնելու ժամանակ բաւական կ'զգածուինք. արդեօք իրենք ի՞նչ կ'զգան։

Ձանազան տեղերէ մեզի կը հարցնեն թէ՛ Առաջնորդ վաճառականացի Բ. Հատորի նախապէս բաժանորդ եղողները մնացորդ թերթերը պիտի ընդունին։

—Այո՛, եթէ բաժնեգինը կանխիկ վճարած են, մնացորդ 7 թիւերը ամբողջովին պիտի ստանան, իսկ չվճարողները թերթ չպիտի ստանան, մինչեւ որ պարտքերն չհասուցանեն։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԵՒ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարին սկսեալ Համագիտակ պիտի հրատարակուի շաբաթական 18-20 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ։

ՏԱՐԵՆԱՆ ԴԻՆՆ Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Հատը

30 փարայ

Հասցի

نشانه بربریان مطبعه جی

استانبول باب عالی جاده سی و نمره ۳۸

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ճաֆքաի քիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

ՉԱՆԱՉԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ

ՈՐՈՇԵԱԿ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը	7 ղշ.
Երկու » » » » »	9 »
Երեք » » » » »	11 »
Մէկ » ընտիր » » »	8 »
Երկու » » » » »	10 »
Երեք » » » » »	12 »
Ոսկեզօծ եղերքներով ընտիր թուղթ	16 »
» » գունաւոր » » »	17 »
» թրթրլը եղերք. ձերմակ » » »	17 »
» » » գունաւոր » » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաւալիւք եւ Րըզգա
գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝
12 ղրշ. աւելի ծախք մը վճարել պէտք է
Լուսանկարով միասին տպագրեալ այցա-
քարդերուն 100 հատը 60 ղրշ.

Գաւառներէ եղած յանձնարարութեանց
համար թղթատարի ծախք չի պահանջուր:
Վճարմունք կանխիկ են:

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն
եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Երդ
և 1 ղրդ թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ
վերադարձնելու շնորհ ընեն:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Աֆիոն՝ Խաւիստար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Գօթեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլիէրեան
Խիւսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա. Պարոյր էֆ. Արզուման
Ձմիւռնիս Կարապետ էֆ. Մալէճանեան
Երզնում, Տիգրան էֆ. Բրուտեան
Թեֆրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կիւրին, Միսաք էֆ. Խանդամուր
Հալեպ, Մ. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Խալիբեան
Սիւմ հանի Էթոյ, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Էթերի » » »
Տիարպէիք, Լուսն էֆ. Սրապեան



ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ՆՇԱՆ 4. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

43 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ, ԶԱՐԴԱՐՈՒԱԾ

Կր որսուցալիկ

ՔԱՍԻՄԻ սրամիտ յօգ. ամենքը մեր բն-
տանեկան բարքերու վրայ,

Ա. ՓԱՆՈՍԵԱՆԻ ամէնէն սիրուն ոտանա-
ւորներէն մէկ քանին,

Մ. ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ Ակնցիի նոր թիւերը.
Ստորտեա րանայրիկ պատմութիւնը՝ Անդն-
ցիներու բերնէ եղած, և թէ այդ տոհմակից-
ները ինչպէս կը մեկնեն հեռագիրը, Ֆօնօկ-
րաճը ելեհաւկանութիւնը ևլն.:

Եւրոպական բոլոր վեհապետներու և
վեհապետութիւններու պատկերներն ու անոնց
իրարու հետ ունեցած ընտանեկան կապերը:
Նաեւ զուարճալիքներ, առածներ, վէ-
պեր, օգտակար գիտելիքներ, ելն.:

Գին 5 դահեկան = Թղթատարով 6 դիկն.

Ն Շ Ա Ն Կ. Պ Ե Ր Պ Ե Ր Ե Ա Ն

Պապը-Ալի ճատտէսի, Բաշիտ էֆ. խան, 38

ՏԵՏՐ ՄԵՆ ԱԳՐՈՑ

Զոր գծագրած ու վիճագրած է Պետրոս
Վ. Քաջունի. արհեստին վերջին ծայր կա-
տարելութեամբ, Եւրոպայի նմանօրինակ
զարգացրերու հետ մրցելու շափ: Կը պա-
րունակէ 700 տարբեր վայելչագար ձեւե-
րով-գոյնգոյն անկորլաւէ զարգացրեր, ի-
րենց տեսակին մէջ նոր, առաջինն ու վեր-
ջինը, Գեր. Զոր այս արուեստագիտական
նոր գործն իրրեւ մեծագիծ զարգատաւերու
հաւաքածոյ մը շատ ու շատ օգտակար է
տպագրութիւններու, փորագրութիւններու, վաճա-
ռականներու, նոյնպէս ամէն նորաճաշակ
անձանց համար, նամանաւոր վարժարա-
նաց մէջ ձեռագործի ճիւղին աշխատողաց,
ինչպէս նաեւ հարրանեաց, հրաւիրագրերու
և ձերմակեղէններու մարքա դնելու հա-
մար: Թէեւ 25 ղրշ. օրստուած է սոյն
տետրը ծախել, սակայն Աշճեան Գրատունը
կէս առ կէս 12 ղրշ. զեղջած է անոր գինը:

ԽՐԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՈՆԱՏԵՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՆԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՏՊԻՍԱԿԱՆ ՄԱՐԿԱՆ ԱՅՈՒՆՔԵՐ
ՀԱՅԿԱՆ ՀԱՅԿԱՆ ՀԱՅԿԱՆ
ՀԱՅԿԱՆ ՀԱՅԿԱՆ ՀԱՅԿԱՆ

ՆԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՐՊԵՐ, ՊԱՊԵՐ ԱՆԻ ԶԱՅՏԵՍԻ, ԹԻՒ ՅՑ. ԻՎԵՍԿԱՐ ԼԵՍԿԻՆԻ ԿԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպազրէ ամէն
սեսակ գիւրհեր, ման-

ագրեր, հանգեսներ, ԵՐԶԱՔԵՐԱԿԱՆՆԵՐ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագլուխներ, այ-
լաբարդեր, եւ սպազրութեան վերաբերեալ յամեն սեսակ պիտոյքներ: — Տպագրանքն յստիական
2000է աւելի պատկերներ յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմոցելի մաքրութիւն եւ ճշգրտագոյնութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամէն սեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կարոնք կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ զրկել խմբագրութեանս, հակառակ պարտ-
գային՝ նկատողութեան չեն տուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հաստ
40, իսկ գաշառաց մէջ 50 փարայ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Ց

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմոցելի ածանութեամբ
զոհացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժառն, բնորոշ ու հոտաւէտ թէյ, գործածողներու ջերմագէտ կը յանձնարարենք ան-
գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ձոխ մթերք իջ:

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

Ժ Ա Ն